

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐ» ՀԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԾՐԱԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱԾԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ

ԿԱՊԿ

ԱՌՊ

ՄԱԾԱՊ

Կրթության առանձնահատուկ պայման

Անհատական ուսուցման պլան

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան

2-րդ մակարդակի գնահատում անցած սովորողների նկարագիրը


«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակում «Հուլիս կամուրջ» ՀԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում 2017թ.-ի սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում ՀԿ-ի տարածքային մասնաճյուղերի կողմից 2-րդային գնահատում են անցել Տավուշի մարզի 380 սովորող: Գնահատումն իրականացվել է ՀՀ ԿԳՆ նախարարի՝ ապրիլի 13-ի 2017թ.-ի հրամանով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման» կարգի համաձայն՝ տնօրինության դիմումի և ծնողի գրավոր համաձայնության հիման վրա:

«Աղյուսակ 1»-ում հակիրճ ներկայացված են գնահատման արդյունքները ըստ 4 տարածաշրջանների:

Աղյուսակ 1. Գնահատման արդյունքները՝ ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	Գնահատման արդյունքները					
	Չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	Ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք				Ընդամենը
		Թեթև	Միջին	Ծանր	Խորը	
Իջևան	1	52	44	13	3	114
Նոյեմբերյան	15	41	25	10	2	93
Բերդ	2	23	48	15	3	91
Դիլիջան	3	23	42	12	2	82
<i>Ընդամենը</i>	<i>24</i>	<i>140</i>	<i>159</i>	<i>50</i>	<i>10</i>	<i>380</i>

Գնահատված երեխաների տարիքային բաշխվածությունը ներկայացված է «Գծապատկեր 1»-ում:



Գնահատման արդյունքում ԿԱՊԿ հայտանբերվել է 359 սովորողի համար: Ընդ որում.

- Թեթև 140 հոգի
- Միջին 159 հոգի
- Ծանր 50 հոգի

58 Ն.Գ.Կ
81 ջրայր

Միջին 159 հոգի
 Ծանր 50 հոգի
 Խորը 10 հոգի

Գնահատված սովորողներից 64%-ը տղաներ են, 67%-ը գյուղաբնակ, 27%-ը ունի հաշմանդամություն:

Գնահատման արդյունքում ԿԱՊԿ սովորողների ֆունցիաների խանգարումները և աստիճանը


«Աղյուսակ 2»-ը ներկայացնում է գնահատման արդյունքում ԿԱՊԿՈՒ հայտնաբերված սովորողների բաշխվածությունը ոստ

Աղյուսակ 2. Գնահատման արդյունքները ըստ ֆունկցիոնալ խանգարման ոլորտի և աստիճանի

Խանգարում	Աստիճան				Ընդամենը
	Թեթև	Միջին	Ծանր	Խորը	
Ինտելեկտուալ (մտավոր)	118	130	40	5	291
Լսողական	2	4	4	1	11
Ձայնի և խոսքի	13	6	1	3	23
Շարժողական	4	14	2	1	21
Տեսողական	3	5	3	0	11
<i>Ընդամենը</i>	138	159	50	10	359


Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ամենատարածված ֆունկցիայի խանգարումը հանդիսանում է ինտելեկտուալը. ԿԱՊԿՈՒ սովորողների 82%-ի մոտ հայտնաբերվել է մտավոր խնդիր: Սովորողների բաշխվածությունը ըստ տարբեր ֆունկցիոնալ խանգարումների ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Հայտնաբերված ԿԱՊԿ ոլորտային բաշխվածությունը



Ինտելեկտուալ (մտավոր) խանգարումը ամենատարածվածն է բոլոր տարածաշրջաններում, սակայն «Գծապատկեր 4»-ում տեսանելի է, որ դրա տարածվածության մակարդակը տարբեր է տարածաշրջաններից յուրաքանչյուրում: Նաև տեսանելի է, որ Նոյեմբերյանի տարածաշրջանում ավելի մեծ է ձայնի և խոսքի, ինչպես նաև շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները:

Գծապատկեր 4. Հայտնաբերված ԿԱՊԿ տեսակի բաշխվածությունը՝ ըստ տարածաշրջանների



Գծապատկեր 5. Գնահատման արդյունքների համեմատությունը տղաների և աղջիկների շրջանում

- Չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք
- Թեթև
- Միջին
- Ծանր



Գնահատումը հնարավորություն է տալիս հայտնաբերել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանները՝ հիմնավորելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային համապատասխան հարմարեցումներ:

«Նույսի կամուրջ» ՀԿ-ի 4 տարածաշրջանային կենտրոնների կողմից իրականացված 2-րդ մակարդակի գնահատումները տեղի են ունենում ծնողների մասնակցությամբ, ովքեր շարունակաբար ստանում են խորհրդատվություն կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ, հատկապես

- Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եռաստիճան համակարգ

- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դպրոցական և տարածքային մակարդակներում

Կազմեց՝



Արմինե Խանանյան
«Հուլիս կամուրջ» ՀԿ սոցիոլոգ-վերլուծաբան

Հաստատեց՝



Սոսաննա Թադևոսյան
«Հուլիս կամուրջ» ՀԿ Նախագահ

10.01.2018թ.